

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-197

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

Ջաջուռի բժշկական ամբուլատորիա ՊՈԱԿ-ի
(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Ջաջուի բժշկական ամբուլատորիա ՊՈԱԿ-ը (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Եղիշե Խաչատրյանի, որը գործում է Ջաջուի բժշկական ամբուլատորիա ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. 1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ հավելված 1-ով սահմանված Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով՝ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկի և գների, և սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

- 2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,
- 2.1.2. անխրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,
- 2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,
- 2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

- 2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամաններին համապատասխան,
- 2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 3-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ Նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-XX-000266 տրված 22/09/2003թ-ին, Կ-XX-000836 տրված 03/10/2006թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրի հավելված 3-ով սահմանված «Ծառայությունների մատուցման պայմաններ»-ը,

2.2.4. Պատվիրատուի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ հաստատված տեսանելի վայրերում փակցնել պետական պատվերի ծառայությունների ծավալների և շահառուների վերաբերյալ տեղեկատվական պաստառները,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համալճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել Բուժօգնությունն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի առնվազն նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով:

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մատվ ապահովել պացիենտների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ:

2.2.12. ապահովել անվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը:

2.2.13. ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալների սահմանված կարգով մուտքագրումը և դրանց թարմացումը:

2.2.14. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը:

2.2.15. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կատարողն է կրում պատասխանատվություն:

2.2.16. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.2.17. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում:

2.2.18. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը:

2.2.19. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատման ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին:

2.2.20. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները:

2.2.21. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրի համաձայն ինչպես էլեկտրոնային առողջապահական համակարգով, այնպես էլ տեղում իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված հրամաններով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը քննադատող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ: Սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ:

2.3.2. 500 մլն. և ավել տարեկան պայմանագրային ծավալ ունեցող բժշկական կազմակերպություններում առողջապահության նախարարությունը կարող է ունենալ մշտական ներկայացուցիչ: Ներկայացուցիչների աշխատակարգը, պարտականությունները և իրավունքները կարգավորվում է նախարարի համապատասխան հրամանով:

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ:

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված:

2.3.4.1. բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի:

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը:

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում:

2.3.5. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.5.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ:

2.3.5.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը:

2.3.6. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների բնության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցի ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագրի կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

2.3.7. միակողմանի լուծելուց սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե.

2.3.7.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.7.2. սահմանված ժամկետներում չի իրականացնում պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումները

2.3.8. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.9. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայքում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից նշանակված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը.

2.4.4.1. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուի հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային նամակի ուղարկման ամսաթիվը),

2.4.5. պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.

2.4.6. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍՎՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է.

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը կազմում է պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսը, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսը: Ընդ որում, տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.1.1. Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

4.1.2. Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժին համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարկված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ եթե դրա մասին Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացվել է և նախագգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ, որը հաշվարկվում է պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ՝ 0,05%-ի չափով,

4.4. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններ»-ում նշված պարտավորությունների չկատարման համար,

4.5. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.6. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.7. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.8. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.9. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՎԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

- 6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը:
- 6.2. սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.5.2, 2.3.6, 2.3.7 և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,
- 6.3. սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,
- 6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2021 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2020 թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիրը կնքվելը, բայց ոչ ուշ, քան 2021թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ՝ բացառությամբ Պայմանագրի 2.3.6. կետի: Ընդ որում՝ մինչև Պայմանագիրը կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում,
- 7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը,

7.3. Պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում դադարեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման,

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ,

7.8. սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիմանաբար պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտավորությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

Ջաջուռի բժշկական ամբուլատորիա ՊՈԱԿ

Հասցե

Երևան, Կառավարական տուն 3

Հասցե

գ Ջաջուռ
1-ին փող. 372

Սպասարկող բանկ ֆն գործառնական վարչություն

Բանկային հաշիվ 900011105013

ՀՎՀՀ 02507171

Նախարարության գլխավոր բարտուղար՝

KOCHARYAN
LUSINE
6509770407

Подписано: KOCHARYAN
LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE
6509770407, c=AM
Date: 2020.12.29 19:20:05
+04'00'

Սպասարկող բանկ ֆինանսների նախարարության գլխավոր

Digitally signed by KHACHATRYAN
YEGHISHE 4008650059
Date: 2020.12.29 18:33:50 AMT

Տնօրեն՝

Լուսինե Քոչարյան

/ստորագրություն/

« 28 » դեկտեմբերի 2021 թ

Հեռ: +37460808003

Ֆաքս:

E-mail: info@mqh.am

Եղիշե Խաչատրյան

/ստորագրություն/

« 28 » դեկտեմբերի 2021 թ

Հեռ: +37493156060

Ֆաքս:

E-mail: jajurambulat@mail.ru

Հավելված 1
ԱՆ ՊԱԳ-ԵԶԲ-197
Պայմանագրի

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԻՐԱԿ

ՋԱՋՈՒՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՊՈԱԿ-197
(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը, կոդը)

Տեսակի կոդ	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը
1.4	Ընտանեկան բժշկություն
9	Բոնուս, ՀՀ ԱՆ հրամանով կատարվող բուժօգնություն

Հավելված 2
ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-197
պայմանագրի
(Պայմանագրի անունը)

2021 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար
և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և
սպասարկման ծրագրերը և պայմանագրային գումարները

Ջաջուռի բժշկական ամբուլատորիա ՊՈԱԿ
(Բուժօգնության անվանումը)

(հազար ՀՀ դրամ)

Ծրագիր	Միջոցառում	Բժշկական օգնության և սպասարկման ծրագրի անվանումը	Չափման միավորը	Քանակ	2021 թվականի պայմանագրային գումար
1	2	3	4	5	6
		Ընդամենը, այդ թվում՝	x	x	34,993.97
1099		Առողջության առաջնային պահպանում, այդ թվում	x	x	34,993.97
	11001	Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն, այդ թվում	x	x	34,993.97
		Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում			18,980.04
		Մեծահասակների առողջության առաջնային պահպանում	ազգաբնակչություն	2,786	12,316.9
		Երեխաների առողջության առաջնային պահպանում	ազգաբնակչություն	766	6,099.7
		Դիսպանսերային բժշկական օգնություն, որից	x	x	0.00
		Հոգեկայրաբանական	ազգաբնակչություն	0	0.00
		Հակափոփոխություն	ազգաբնակչություն	0	0.00
		Ուռուցքաբանական (ՀՀ մարզերի համար)	ազգաբնակչություն	0	0.00
		Մաշկավեներաբանական (ՀՀ մարզերի համար)	ազգաբնակչություն	0	0.00
		Արյունաբանական	ազգաբնակչություն	0	0.00
		Նարկոլոգիական	ազգաբնակչություն	0	0.00
		Դիսպանսեր ծառայությունների լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված փորձի քննության համար հոսանքազուրկ)	ազգաբնակչություն	0	0.00
		Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա, որից	x	x	563.48
		Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (անմիջական սպասարկման տարածքի համար)	ազգաբնակչություն	0	0.00
		Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (կցագրված տարածքի համար)	ազգաբնակչություն	0	0.00
		Ընդհանուր բժշկի կողմից իրականացվող	ազգաբնակչություն	1,366	563.48
		Ընտանեկան բժիշկների կողմից նեղ մասնագիտացված խորհրդատվության ուղեգրում	x	x	1,508.53
		Ընտանեկան բժիշկների կողմից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրում	x	x	1,569.98
		Անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր	x	x	1,369.48
		Հոգեբանական հսկողություն	x	x	505.49

		Հղինների նախաձեռնողյան և հետձեռնողյան հսկողության ընթացքում, ինչպես նաև կանանց և 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	x	X	0.00
		Զորակոչային և նախազորակոչային տարիքի անգանց արտահիվանդանոցային փորձաքննություն, առ թվում	x	X	0.00
		Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովներ	x	X	0.00
		Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային ուղեգրման ճանապարհածախս	x	X	0.00
		Պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում	x	X	0.00
		ԱԱՊ բժշկի գործունեությունը գնահատող ցուցանիշների կատարման դիմաց ֆինանսավորում	x	X	474.98
		Հեպատիտ Ց-ի ախտորոշման և բուժման ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտություններ	x	X	0.00
		Բուժքույրերի կողմից իրականացվող բժշկական օգնություն ԲՄԿ-ներում	բուժքույր	8	9,494.40
		Բուժքույրերի կողմից երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում	աշակերտ	512	1,091.07
		Ընտանեկան բժիշկի կողմից տնային կանչեր աշխատաժամից դուրս՝ շտապօգ. մեքենայով	x	X	0.00
		Հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնություն (emergency)	x	X	0.00
		Այլ, մյուս խմբերում չընդգրկված տիպի բժշկական օգնություն և սպասարկում, ողիզ	x	x	0.00
		Հղինների նախաձեռնողյան հսկողության բարելավման, սկրինինգների ընդլայնման ենթածրագրի կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում իրականացվող լաբորատոր հետազոտություններ	x	x	0.00
